ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՏԻՐՈՒՀԻ ՍԻՐԵԿԱՆՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Հայոց պատմության ամբիոնի հայցորդ
tiruhi.sirekanyan@list.ru

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆՆԵՐԸ (1838-1870 թվականներին) (ՄԱՍ II)[1]

Բանալի բառեր և արտահայտություններ. Թիֆլիս, Ներսիսեան հոգևոր դպրոց տպարան, Արզանեանց եղբայրների տպարան, Ղուլեանցի և Շահմուրադեանցի տպարան, Գաբրիել քահանա Պատկանեանի տպարան, Հակոբ Գրիգորեան Արզումանեանցի տպարան, Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի տպարան, Ալադաթեանի գրատուն:

Ключевые слова и выражения: Тифлис, духовная семинария-типография Нерсисян, типография братьев Арзанянц, типография Гулеянца и Шахмурадянца, типография Габриэла Патканяна, типография Акопа Григоряна-Арзуманянца, типография Габриэла Мелкумянца и Амбарцума Энфиаджянца, книжный дом Аладатянца.

Key words and expressions: Tiflis, the Nersisyan Theological Seminary-Printing House, Printing House of Arzanyants Brothers, the Printing House of Guleyants and Shahmuradyants, the Printing House of Gabriel Patkanyan, the Printing House of Hakob Grigoryan-Arzumanyants, the Printing House of Gabriel Melkumyants and Hambartsum Enfiadjyants, the Book House of Aladatyants.

Նախաբան

Ներսիսյան հոգևոր դպրոցի տպարանը հիմնադրումից՝ 1823 թվականից սկսած գործել է մինչև 1830 թվականը, ապա մինչև 1841 թվականը դադարել է գործել, որից հետո ընդհատումներով գործել է մինչև 1870 թվականը: Փաստորեն Թիֆլիսում 1830-1838 թվականներին, ավելի քան ութ տարի, դադարել է հայերեն գրքերի հրատարակությունը: Սակայն հայերեն գրատպությունը այլ հայկական տպարաններում վերսկսվել է 1838 թվականից: Թիֆլիսում հայերեն գրքեր հրատարակել են Հակոբ և Դավիթ Արզանեանցների, Ղուլեանցի և Շահմուրադեանցի, Հակոբ Գրիգորեան Արզումանեանցի, Գաբրիել քահանա Պատկանեանցի, Մովսես

[1] **Մաս I-ը** տպագրվել է 2 02 2 թ. 1(55) համարում:

Վարդանեանցի, Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի, ապա՝ միայն վերջինիս, տպարանները, Ալադաթեանցի գրատունը: Այս տպարաններում 1838-1870 թվականներին տպագրվել է 116 անուն գիրք, 14 օրացույց, հրատարակվել է 3 թերթ, 4 ամսագիր: Հեղինակը մանրակրկիտ մատենագիտական աշխատանք է կատարել 1838-1870 թվականներին, Ներսիսյան հոգևոր դպրոցի տպարանից անկախ գործած հայկական այլ տպարանների, դրանցում տպագրված գրքերի, օրացույցների, թերթերի տպագրության, հրատարակիչների տվյակները ճշտելու ուղղությամբ:

ԳԱԲՐԻԵԼ ՄԵԼՔՈՒՄԵԱՆՑԻ ԵՎ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԷՆՖԻԱՃԵԱՆՑԻ (1857-1863 թվականներ), ապա՝ 1864 թվականից ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԷՆՖԻԱՃԵԱՆՑԻ

ՏՊԱՐԱՆԸ

1850-ական թվականների վերջերին Թիֆլիսում հիմնադրվել է ևս մեկ տպարան: Այն հիմնադրել են եղբայրներ Ավետիք (1816 -) և Համբարձում Էնֆիաճեանցները (1824-1896)[2]: Եղբայրները ծնվել են Կարին քաղաքում: 1830 թվականին ընտանիքով փոխադրվել են Թիֆլիս: Սովորել են Ներսիսյան հոգևոր դպրոցում:

1840-ական թվականների վերջերին եղբայրները Թիֆլիսի կենտրոնում, Երևանյան հրապարակում գտնվող մի շենքի վերնահարկում, որը հետագայում Թամամշյանների թատրոնի և իջևանատան հիմքն է դարձել, կազմակերպել են գրավաճառանոց, որն այն ժամանակ Թիֆլիսում եղել է միակը, որտեղ վաճառվել են գրքեր ու պարբերականներ: Ավագ եղբայրը՝ Ավետիքը, մի քանի անգամ մեկնել է Կ.Պոլիս հորեղբոր մոտ, որտեղից Թիֆլիս է բերել աշխարհի տարբեր քաղաքներում լույս տեսած հայերեն նոր հրատարակված գրքեր:

Զուգահեռ 1850-ական թվականների կեսերին եղբայրները նույն շենքում բացել են տպարան: Շուտով եղբայրները բաժանվել են, տպարանը մնացել է Համբարձումին, գրավաճառանոցը՝ Ավետիքին:

1850 թվականին, երբ եղբայրները դեռևս միասին էին գործում, կազմել և տպագրել են իրենց գրավաճառանոցի գրքերի ցուցակը՝ «Յուակ ամենայն ազգ հայերէն մատենից, տպագրելոց ի Վենետիկ, ի Վեննա, ի Կոստանդնուպօլիս, ի Կալկաթա, ի Զմիւռնա, ի Մոսկով և յայլ քաղաքս: Վաճառին ի գրատան եղբարցք Աւետիքայ Համբարձումայ Էնֆիաճեանց ի

---

[2] ***Ստեփանյան Գ.***, *Կենսագրական բառարան: Հտ. Ա, «Հայաստան» հրատարակչություն, Ե., 1973 թ., էջ 341:* ***Հայր Գարեգին Զարբհանալեան****, Պատմութիւն հայկական տպագրութեան, սկզբնաւորութենէն մինչ առ մեզ, էջ 2 2 1-2 2 2 :*

Տփխիս, ի պանդոկի Գ.Թամամշեանց թիվ 18, ի վերին յարկս» վերնագրով[3]: Սա փաստորեն Կովկասում առաջին տպագրված գրացուցակն է:

Հակոբը աշխատակցել է «Հայաստան», «Արշալույս Արարատեան», «Բանասեր» պարբերականներին:

Տպարանի աշխատանքն արդյունավետ դարձնելու նպատակով 1856 կամ 1857 թվականին Համբարձում Էնֆիաճեանցը համագործակցության է հրավիրել Գաբրիել Մելքումեանցին և նրա հետ աշխատեցրել տպարանը: Սակայն վերջինս 1863 թվականին դադարեցրել է համագործակցությունը, որից հետո տպարանը պատկանել է միայն Հ.Էնֆիաճեանցին[4]: Նա և՛ տպարանատերն էր, և՛ հրատարակիչը:

1857-1870 թվականներին տպարանը իրականացրել է 63 հրատարակություն՝ 53 գիրք, 4 օրացույց, 6 թերթ և հանդես: Այստեղ տպագրվել են Գաբրիել Խատիսեանցի «Սէր» մանկական ընթերցանության գիրքը (1861 թ.), Մատթեոս կաթողիկոսի «Հայելի աստուածային շնորհաց» աշխատությունը (1862 թ.), Խաչատուր Աբովյանի «Պարապ վախտի խաղալիք» ժողովածուն (1864 թ.), Գաբրիել Սունդուկյանի «Գիշերվա սաբրը խեր է» (1866 թ.) և այլն գործեր:

Առաջին շրջանում այդ տպարանում սկսել է տպագրվել Մ.Աղաբեկեանցի «Կռունկ Հայոց աշխարհի» ամսագիրը (1860–1863 թթ.), որի տիտղոսաթերթին նշվում էր. «Ի հայ տպարանի Գաբրիելի Մելքումեանց և Համբարձումայ Էնֆիաճեանց»: 1862 թվականից այս տպարանը Ներսիսյան դպրոցի տպարանից կարողանում է իր հարկի տակ տեղափոխել նաև «Մեղու Հայաստանի» թերթի հրատարակությունը: Այստեղ են տպագրվել «Կռունկ Հայոց աշխարհին» (1862 թվականից), «Հայկական աշխարհի կռունկ» (1864 թ.), «Հայկական աշխարհ» (1864–1871 թթ.), «Վաճառական» (1866–1867 թթ.) թերթերը:

1870-ական թվականների սկզբից այս տպարանում են հրատարակվել բազմաթիվ արժեքավոր գրքեր և այլ պարբերականներ, որոնց ուսումնասիրությունը մեր թեմայից դուրս է:

1263 թվականից սկսած Ներսիսյան դպրոցը ևս, երբ իր տպարանը փակ էր, իր հեղինակների կազմած դասագրքերն ու գրքերը տպագրել է այս տպարանում: Օրինակ, Ստեփաննոս Պալասանյանի 1865 թվականին հրատարակված «Պատմութիւն Հայոց գրականութեան» գրքի վրա գրված է.

---

[3] Տպագրվել է «Ներսիսեան Հոգևոր Դպրոցի Հայոց ընծայելոյ ի Գէորգայ Երեմեան Արծրունւոյ» տպարանում, 2 4 էջ:

*[4] **Լէո**, Հայ գրքի տօնը, էջ 157-160:*

«Տպագրութիւն Ներսիսեան ազգային հոգեւոր դպրոցի ի տպարանի Համբարձում Էնֆիաճեանց և Ընկերութեան»:

1870 թվականին կամ հաջորդ տարում Համբարձում Էնֆիաճյանցը գնել է Ներսիսյան հոգևոր դպրոցի տպարանը, փաստորեն ավարտին է հասցրել դեռևս 1664 թվականին Ամստերդամում հիմնադրված տպարանի գործունեությունը: Այս գործարքով Համբարձում Էնֆիաճյանցի տպարանը 1870-ական թվականներին իր ձեռքն առավ Թիֆլիսի հայերեն գրքատպության մենաշնորհը:

Համբարձում Էնֆիաճյանցի տպարանի առավելություն այն էր, որ ուներ սեփական տառաձուլարանը: Տպարանը, գործածության մեջ դրել Փարիզի նորաձև հայերեն տառերից շատերը, իսկ Վիեննայի տառերի մի տեսակը, որը օգտագործվել է գրքերի տպագրության համար, դրանք իր պատվերով բարեփոխվել էին, դրանց հին գլխագրերը հարմարեցրել էին փարիզյան գլխագրերին: Արդյունքում առաջացել էր ինքնուրույն տիպ, որը կարելի է անվանել Թիֆլիսի տիպ:

Համբարձում Էնֆիաջյանի հրատարակություններն աչքի են ընկել մաքուր տպագրությամբ, ճաշակավ: Տպարանի տիրապետող դիքը նա պահել է իր ձեռքում համարյա մինչև 1880–ական թվականները:

Թեև Թիֆլիսում 1870 թվականից հետո նոր, մրցակից տպարաններ էին բացվեցվել, բայց Էնֆիաճյանցի տպարանի ուժը ձուլարանն էր, որը դեռևս միակն էր, որ Թիֆլիսի մյուս տպարաններին տառեր էր մատակարարում:

***<u>Տպարանի հրատարակությունները</u>*:**

<u>Գրքեր</u>

1. Վերադարձ երից վարդապետաց Սարգսի Թէոդորեան, Գաբրիէլի Այվազեան և Ամբրոսեայ Գալֆայեան ի ծոց լուսաւորչական Հայաստանեայց Սուրբ եկեղեցւոյ: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1857:
2. **Պատկանեան Միքայել:** Միջի մարդ կամ մոցիքուլ: Կոմեդիա-վոդեւիլ: Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի: 1859, 61 էջ, շարվ. 17,5x10 սմ:
3. Աստուածաշունչ երեխեքանց ընթերցանութեան: Ի հայրապետութեան սրբոյ Էջմիածնի Տ.Տ. Մատթէոս աստուածընտիր կաթողիկոսի ամենայն Հայոց: Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի: 1860, 66 էջ, շարվ. 20x12 սմ:
4. Բարոյական պատմութիւնք երեխայից համար: Աշխատասիրութեամբ հայ աշակերտաց գիմնազիային Թիֆլիզոյ: Նուիրեալ այժմեան հայկազուն մանկանց: Տետրակ Ա: Թիֆլիս, տպ. Գաբրիել

Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի: 1860, 85 էջ, շարվ. 13,5x8 սմ:

5. **Կարէնեանց Յակովբ:** Շուշանիկ դուստր մեծին Վարդանայ Հայոց Սպարապետի: Ողբերգություն ազգային պատմութիւնից, բաժանած 3 հանդեսի վրայ: Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի: 1860, 73 զարդափակ էջ, 2 թ. նկ, 1 թ. նոտա, շարվ. 17x11 սմ:

6. **Գարեգին Տէր Գրիգորեան Մուրատեանց:** Հայերէն քերականութիւն նորավարժ ուսանողաց համար: Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելքումեանցի եւ Համբարձում Էնֆիաճեանցի: 1860, 84 էջ, շարվ. 14,5x9,5 սմ:

7. **Պոօշեանց Պերճ:** Սոս եւ Վարդիթեր: Ազգային վիպասանութիւն: Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի: 1860, 227 էջ, շարվ. 18,5x11 սմ: Գինը՝ 1 ռուբլի:

8. **Տէր-Գրիգորեան Գէորգ:** Կրթութիւն թուաբանական: Յօգուտ նորավարժ Մանկանց հայոց: Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի: 1860, 154 էջ, 17 չհամար. էջ, նկ., գծագր., շարվ. 13x8 սմ:

9. **Աղաբէգեան Մարկոս:** Գարեգին Սրուանձտեան: Ողբերգ. Չորս մասնով: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1861:

10. **Խատիսեանց Գաբրիել:** Սէր: Հայ երեխանցը ընծայ: Հտ. Ա: Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի: 1861, 108 զարդափակ էջ, շարվ. 15x10 սմ: Գինը՝ 50 կոպ.:

11. **Մամիկոնեանց Յոհաննէս:** Արհեստ քաղցրաւենիք շինելոյ: Հտ. Ա: Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի: 1861, 136 էջ, շարվ. 15x9 սմ:

12. **Մուրատեան Գարեգին-Մելիսեդեկ:** Գարեգին Սրուանձտեան: Ողբերգութիւն: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1861:

13. **Սկանդարեան Գէորգ, Սկանդարեան Սարգիս, Մելիքեանց Ղահրաման:** Վարդարան ի պէտս վարժութեան դեռահաս մանկանց: Աշխատասիր. Երից, երկուց եղբարց Գէորգայ և Սարգսի և ընկեր նոցայ Ղահրամանի: Թարգմ. Ըստ մեծի մասին ի պարսկերէնէ ի հայ բարբառ: Տետրակ Ա: Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի: 1861, 34 էջ, 3 էջ չհամարակալված, շարվ. 14x9,5 սմ:

14. Քանի մը խոսք Հռովմէական եկեղեցվո գլխավորութեան մասին: Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի: 1861, 51 էջ:

15. **Աբովեանց Խաչատուր:** Նախաշաւիղ կրթութեան ի պէտս նորավարժից: Մաս 1: Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելքումեանցի և

Համբարձում Էնֆիաճեանցի: 1862, 103 զարդափակ էջ, շարվ. 16x10 սմ: Գինը՝ 30 կոպ.:

16. **Երզնկեանց Ռոստոմ:** Հրապարակական պատասխանի ընդդէմ զրպարտութեանց Դաբաղ Դաղոյի: Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի: 1862, 43 էջ, շարվ. 16x8 սմ:
17. **Մատթէոս կաթողիկոս:** Հայելի աստուածային շնորհաց: Գրաբառ, յօրինեալ ի Սուրբ Էջմիածին: Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի: 1862, 171 էջ, շարվ. 16x8 սմ: Գինը՝ 60 կոպ.:
18. **Պատկանեանց Միքայել:** Պարգեւ մանկանց: Չորրորդ հրատարակություն: Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի: 1862, 121 էջ:
19. Այբբենարան[5] երեխանց համար: Նոր ձեւով: Աշխատասիրութիւն Հայ աշակերտաց գիմնազիային: Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի: 1862: Գինը՝ 20 կոպ.:
20. **Պ.Ս. [Պետրոս Սիմէօնեանց]:** Սրբազան պատմութիւն հայ տղայոց եւ աղջկանց համար[6]: Հատոր Բ: Թիֆլիզ, տպ. Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի: 1862, 240 էջ, շարվ. 16x9,5 սմ: Գինը՝ 1 ռուբլի արծաթ:
21. **Ռոստոմեան Դ[ավի]թ:** Հասարակաց բժշկականութիւն: Հտ. Ա: Перепечатано из армян. Журн. «Журавля»: Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի: 1862, 96 էջ, շարվ. 19x10 սմ:
22. **Սահառունի Իսահակ:** Մեղուաբանութիւն: Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի: 1862, ՌՅԺԱ: 106 էջ, շարվ. 11,7x7 սմ:
23. **Լանգլօա Վիկտոր:** Մովսէս Խորենացի եւ նրա պատմութիւնը: Թարգմանությունը՝ Ստեփաննաս Պալասանեանի: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1863, 64 էջ:
24. **Մատթէոս կաթողիկոս:** Դիտողութիւն ճշմարտութեան Ս.Աւետարանին Յիսուսի Քրիստոսի: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1863: 44 էջ, շարվ. 16,5x10 սմ:

---

[5] Նշված է Հակոբ Էնֆիաճեանցի 1863 թվականի օրացույցում:

[6] Տպարանատեր Համբարձում Էնֆիաճեանցը գրախոսել է «Կռունկ Հայոց աշխարհին» ամսագրի 1862 թվականի 8-րդ համարի 636-638 էջերում:

25. **Մատթէոս կաթողիկոս:** Խորհրդածութիւն շնորհաց եւ նշանաց խորհրդոյ Քրիստոսական Սուրբ եկեղեցվոյ ի պէտս ուղղափառ մանկանց նորին: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1863: 161 էջ: Գինը՝ 50 կոպ.:
26. **Պոօշեանց Պերճ:** Աղասի: Ազգային ողբերգ. (Վերք Հայաստանից առած): Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1863 ՌՅԺԲ, 75 էջ, շարվ. 17,5x10 սմ:
27. **Շահնազարեանց Կարապետ վարդապետ:** Ծրագիր պատմութիւն Հայաստան աշխարհին եւ տեսութիւն հին Հայաստանի եւ նորա այժմեան վիճակին վրայ: (Գաղղիականէն թարգմանուած) Տփխիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1863, 112 էջ: Գինը՝ 1 ռուբլի: Տե՛ս Խաչատուր Աբովյանի անվան Մանկավարժական համալսարանի գիտական գրադարան, գույքահամար 70:
28. **Սիմէօնեանց Պ[ետրոս]:** Սրբազան պատմութիւն Նոր կտակարանի հայ տղայոց եւ աղջկանց համար: Հատոր Ա[7]: Թիֆլիզ, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1863, 236 էջ, շարվ. 16x9,5 սմ: Գինը՝ 60 կոպ.:
29. **Տէր-Յակոբեան Նիկողայոս:** Учебникъ русскаго языка. Հրահանգ ռուսաց լեզուի: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1863, 72, 126, 208[8] էջ, շարվ. 17,5x10,5 սմ:
30. **Քոչարեան Կարապետ:** Տանու բժիշկ կամ հասարակաց բժշկարան: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1863, 145 էջ, շարվ. 19x10,5 սմ: Գինը՝ 80 կոպ.:
31. **Աբովեան Խաչատուր:** Պարապ վախտի խաղալիք: Պարապ մարդու տանու միտք: Շինեց եւ սազացրեց՝ Խաչատուր Աբովեան: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1864, 137 էջ, 6 էջ չհամարակալված, շարվ. 16,5x9 սմ: Գինը՝ 50 կոպ.:
32. Նոր երգարան: Ժողովածու գործածական: (Հրատարակություն Տէր-Միքայէլեան եւ ընկ.): Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1864, 151 զարդափակ էջ, շարվ. 14x9,5 սմ: Գինը՝ 70 կոպ.:

---

[7] Գրքի դրսի չորրորդ կազմին տպագրվել է Զաքարիա Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանոցի հրատարակությունների վաճառքի ենթակա 33 գրքի ցանկ, որտեղ ներառված են նաև Համբարձում Էնֆիաճեանցի հրատարակած երկու գրքեր:

8 Գիրքը չորս մասից է: I և II մասերի էջերը շարունակվել են և թերի են (72), իսկ III և IV մասերը ունեն առանձին էջակալություն, կազմված են հետուառաջ՝ սկզբից IV մասն է (12 6), ապա՝ III մասը (2 08):

33. Ժամագիրք Հայաստանեայց Ս. եկողեցւոյ, արարեալ սրբոց թարգմանչացն մերոց Սահակայ եւ Մեսրոպայ եւ երանելի հայրապետացն մերոց Գիւտոյ եւ Յոհաննու Մանդակունւոյ եւ սրբոյն Ներսիսի Շնորհալւոյ: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1865, ՌՅԺԴ, 720 էջ, , շարվ. 13x9 սմ:
34. **Կորնելիոս**: Սկզբնական դասագիրք աշխարհագրութեան: Ամերիկայի մետոդով աշխատութիւն Կորնելիոսի: Տետրակ Ա: Հրատ. Հրատ. Տէր-Միքայէլեանց: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1865, 77 էջ, շարվ. 14x10 սմ:
35. **Մարկոսեան Գրիգոր**: Մանր ուսմունք քրիստոնեական հաւատոյ եւ սրբազան պատմութեան աւետարանի: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1865, 134 էջ, շարվ. 11x7,5 սմ:
36. **Պալասանեան Ստեփաննոս**: Պատմութիւն Հայոց գրականութեան: Հտ. առաջին: Բանաւոր գրականութիւն: Տպագր. Ներսիսեան ազգային հոգեւոր դպրոցի[9]: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1865, 259 էջ, շարվ. 13,5x8 սմ: Տե՛ս Խաչատուր Աբովյանի անվան Մանկավարժական համալսարանի գիտական գրադարան, գույքահամար 411:
37. **Պալասանեան Ստեփաննոս**: Ֆրանսերէն այբբենարան: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1865, 4, 95 էջ, շարվ. 14x8,5 սմ, գինը 40 կոպ.:
38. Պատմութիւն Աստուածաշունչ գրոց Հին կտակարանի: Ի պէտս աշակերտաց եւ աշակերտուհեաց: Համառոտեալ՝ Յ.Ա.Ք.Օ.: Երկրորդ տիպ. յաւելեալ եւ ընդարձակեալ: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1865, 122 էջ, 10 էջ չհամարակալ., շարվ. 13x7 սմ:
39. Պատմութիւն Աստուածաշունչ գրոց Նոր կտակարանի: Չորս աւետարանիչներից հաւաքած: Աշխատասիր.՝ Յ.Ք.Օ.: Մաս Ա: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1865, 135 էջ, շարվ. 16x9 սմ:
40. **Պարլէյ Ամերիկայի**: Ամերիկացի Պարլէյի զրոյցները: Թարգմ. Կամսար Օձնեցի: Տպագրեալ ծախիւք Ներսիսեան ազգային հոգեւոր դպրոցի /հրատ. Ներսիսեան դպրոցի/: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1865, 183 էջ, 7 էջ չհամարակալ., շարվ. 14,5x10 սմ:
41. Սաղմոս երջանիկ Մարգարէին Դաւթի: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1865, 49 էջ:

---

[9] Ներսիսյան հոգևոր դպրոցի տպարանի փակ լինելու պատճառով դասագիրքը տպագրվել է Հ.Էնֆիաճեանցի տպարանում:

42. Այբբենարան հայերեն լեզուի: Աշխատասիրութիւն հայ աշակերտաց գիմնազիային Թիֆլիզոյ: Տետրակ Բ: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1866, 52 էջ, նկ., շարվ. 12x8 սմ:

43. **Գ.Տ.Ա. [Գէորգ Տէր-Աղեքսանդրեան] եւ Ա.Ե. [Ալեքսանդր Երիցեանց]**: Ընթերցարան հայ երեխաների համար: 1-ին տիպ: Աշխատասիր. Գ.Տ.Ա. և Ա.Ե.: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1866, 97 էջ, շարվ. 17x10 սմ:

44. Կանոնադրութիւն Ներսիսեան Ազգային հոգեւոր դօրոցին Տփխիսոյ: Թիֆլիս, տպ. Հ.Էնֆիաճեանցի: 1866, 32 էջ, շարվ. 11,5x9,5 սմ, գինը 15 կոպեկ:

45. Մատաղահասների գերեզման կամ մարմնաշարժութիւն (ձեռնամոլութիւն): Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1866, 18 էջ, շարվ. 13x8 սմ: Գինը՝ 10 կոպ.:

46. **Շահ-Պարոնեան Մ.**: Մի քանի խօսք խօլերայի պատճառների եւ նորանից զգուշանալու միջոցների վերայ: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1866, 21 էջ, շարվ. 16x9 սմ:

47. **Սունդուկեան Գաբրիել**: Գիշերվան սաբրը խէր է: Վօդրվիլ 1 արար.: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1866, 26 էջ, շարվ. 14x8 սմ, գինը՝ 20 կոպ.:

48. **Տէր-Գրիգորեան Մ[իքայէլ]**: Էս էլ մի մօցիքլութիւն կամ զակուսկա, ճաշ, իրիգնահաց: Ֆարս-վօդրվիլ մեկ արարուածով: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1866, 31 էջ, շարվ. 13,5x8 սմ: Գինը՝ 20 կոպ.:

49. **Գէորգ արքեպիսկոպոս Վեհապետեան**: Ուղեւորութիւն առաջնորդի Հայոց Ատրպատականի Գէորգա արքեպիսկոպոսի Վեհապետեան ի Թէհրան: 7 եւ 10 խնդրագիրք նորա եւ հրովարտակք առ այնս արեգակնափայլ շահին պարսից: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1866, 34 գծափակ էջ: Շարվ. 14x9,5 սմ:

50. **Քալանթարեան Գէորգ:** Մահ: Բանաստեղծութիրն («Հայկական աշխարհ» օրագրից 1865 թիվ 9): Թիֆլիս, 1866, 10 էջ, շարվ. 20x10,5 սմ:

51. **Աղայեանց Ղ[ազարոս]**: Արութիւն եւ Մանուէլ: Ազգային վէպ: Հտ. 1: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1867, 240 էջ: Շարվ. 14x8,5 սմ: Գինը՝ 1 ռուբլի:

52. **Կարենեան Յ[ակոբ]**: Նկարագիր Սուրբ Սարգիս եկեղեցւոյ Հայոց Թիֆլիզոյ: Թիֆլիզ, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի և ընկ.: 1867, 44 էջ, շարվ. 18x10 սմ:

53. Աւետարան ճաշու եւ տոնք յուրաքանչիւր աւուրց ի բոլոր տարվոջն ըստ նորո Տոնացուցիւ: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1867, 278 էջ: Գինը՝ 3 ռուբլի 50 կոպ.:

54. **Սիմէօնեանց Պետրոս**: Դասագիրք ընդհանուր պատմութեան: Հտ. առաջին: Պատմութիւն հին դարերի: Թիֆլիզ, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1867, 192 էջ, շարվ. 14x8,5 սմ, գինը 80 կոպ.:
55. **Սիմէօնեանց Պետրոս**: Դասագիրք միջին դարերու պատմութեան: Հատոր երկրորդ: Թիֆլիզ, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի եւ ընկ.: 1867, 129 էջ:
56. **Ստեփանոս Յովհ. Պալասանեան**: Գործնական քերականութիւն հայերէն լեզուի: Հատոր առաջին: Ստուգաբանութիւն: Թիֆլիզ, տպ. Համբ. Էնֆիաճեանցի եւ ընկ.: 1868, 206 էջ:
57. **Ասկերեան Յ[ովհաննէս]**: Հասունեան քաղաքականութիւն: Երեսուն և հինգ ամեայ Պատմութիւն գեր. Հասունեան Անտոն վարդապետին, սկսեալ ի քահանայութենէն մինչև ցՊատրիարքութիւնն Կիլիկիոյ: Տփխիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանց եւ ընկ.: 1868, ՌՅԺԸ, 528 էջ, շարվ. 12x8 սմ: Տե՛ս Խաչատուր Աբովյանի անվան Մանկավարժական համալսարանի գիտական գրադարան, գույքահամար 943:
58. **Նաղեժդա Վ.**: Աշտոնի ընտանիքը: Թարգ. Տ.Ն.Ա.-ի: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1868, 74 էջ, շարվ. 14x9 սմ:
59. **Էրազմուս Վ.**: Կերակուրը իբրեւ միջոց տկարութիւններից զգուշացնելու համար: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1868, 54 էջ:
60. Ցուցակ հայերեն մատենից: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1868, 42 էջ:
61. **Փուղինեան Նիկողայոս**: Դալալ Ղազօ: Կատակերգութիւն 2 գործող.: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1868, 40 էջ, շարվ. 12,5x8 սմ: Գինը՝ 20 կոպ.:
62. **Աբովեան Գէորգ**: Համառօտութիւն հայոց ազգի պատմութեան: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1869, 277 էջ, շարվ. 13,2x9 սմ:
63. **Բարխուդարեան Գէորգ**: Մէր կամ մահ: Ողբերգ. 5 արար /Հայկ. թատր. տետր. Դ/: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1869, 156 էջ, շարվ. 9x7 սմ:
64. **Գ.Տ.Ա. [Գէորգ Տէր-Աղեքսանդրեան] եւ Ա.Ե. [Ալեքսանդր Երիցեանց]**: Ընթերցարան հայ երեխաների համար: Երկրորդ տիպ: Աշխատասիր. Գ.Տ.Ա. և Ա.Ե.: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1869, 105 էջ, շարվ. 16x9 սմ: Վաճառվել է Թիֆլիսի Ավետիք Էնֆիաճեանցի գրախանութում, հինը 40 կոպեկ:
65. **Ստեփանոս Յովհ. Պալասանեան**: Գործնական քերականութիւն հայերէն լեզուի: Հատոր երկրորդ: Համաձայնութիւն: Թիֆլիս, տպ. Համբ. Էնֆիաճեանցի եւ ընկ.: 1869, 104 էջ:

66. Սիրիր թշնամիներուդ: Պատմութիւն գաղթականների կեանքից: Հիւսիսային Ամերիկայում: Թարգմ. Յ.Միրզաբէգեանց: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1869, 150 էջ, շարվ. 10x7 սմ:

67. **Մեսրոպ քահանա Փափազեանց:** Հրահանգ քերականութեան հայերեն լեզուի[10]**:** Աշխատասիրութիւն Մեսրոպ քահանայի Փափազեանց: Թիֆլիս, տպ. Հ.Էնֆիաճեանց, եւ ընկ.: 1869, 149 էջ, շարվ. 14x9 սմ:

68. Ճառախօսութիւն եւ համարատուութիւն Ներսիսեան Ազգային հոգեւոր դպրոցի, հանդիսաւոր գործողութեան մեջ 1869 թուականի հոկտեմբերի 12-ին հանդերձ դպրոցի ուսուցիչների քանի մի գիտնական աշխատութեամբք, դամբանական ճառախոսութեամբ հանգուցեալ հոգաբարձուի Միքայէլի Տէր Գրիգորեանի դագաղի վերայ այլև համառօտ ցուցակ Ներսիսեան հոգեւոր ազգային դպրոցի մէջ աւանդուած ուսանելի նիւթերի: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1870, 70 էջ, շարվ. 20,5x14 սմ:

69. Մանկական աշխարհ: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1870, 168 էջ:

70. **Պալասանեան Ստեփաննոս**: Ընդհանուր տեսութիւն արեւելեան նոր գրաւոր լեզուի Հայոց: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1870, 120 էջ, շարվ. 18x9 սմ:

71. Սաղմոս երջանիկ Մարգարէին Դաւթի: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1870, 48 էջ, շարվ. 12x7 սմ, գինը՝ 20 կոպ.:

72. **Տէր-Հակոբեանց Ն[իկողայոս]**: Գործնական թվաբանութիւն: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1870, 102 էջ:

73. **Տէր-Հակոբեանց Ն[իկողայոս]**: Մայրենի լեզու: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1870, 60 էջ:

<u>Օրացույցներ</u>

74. **Օրացոյց 1860 թուականին** Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի: 1859, 98 էջ, շարվ. 3x4,6 սմ:

75. **Օրացոյց 1861 թուականին Քրիստոսի եւ Ազգիս Հայոց ՌՅԺ - 1310:** Բ տարի: Ի հայրապետութեան Տէր Մատթէոսի աստուածընտիր կաթուղիկոսի ամենայն Հայոց: Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի: 1860, 104 էջ, շարվ. 5x10 սմ:

76. **Օրացոյց 1862 թուականին***:* Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի: 1861, 104 էջ, շարվ. 3x4,6 սմ:

---

[10] Տե՛ս Խաչատուր Աբովյանի անվան Մանկավարժական համալսարանի գիտական գրադարան, գույքահամար 502 :

77. **Օրացոյց 1863 թուականին Քրիստոսի եւ Ազգիս Հայոց ՌՅԺԲ - 1312:** Դ տարի: Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի: 1862, 132 չհամարակալված էջ, շարվ. 8,5x5 սմ:
78. **Օրացոյց 1864 նահանջ թուականին Քրիստոսի եւ Ազգիս Հայոց ՌՅԺԳ - 1313:** Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1863, 173 գծափակ էջ, շարվ. 9x5 սմ:
79. ***Օրացոյց 1865 թուականին:*** Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1864, 104 էջ, շարվ. 3x4,6 սմ:
80. ***Օրացոյց 1866 թուականին:*** Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1865, 104 էջ, շարվ. 3x4,6 սմ:
81. ***Օրացոյց 1867 թուականին:*** Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1866, 104 էջ, շարվ. 3x4,6 սմ:
82. ***Օրացոյց 1868 թուականին:*** Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1867, 104 էջ, շարվ. 3x4,6 սմ:
83. ***Օրացոյց 1869 թուականին:*** Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1868, 104 էջ, շարվ. 3x4,6 սմ:
84. ***Օրացոյց 1870 թուականին***[11]***:*** Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1869, 104 էջ, շարվ. 3x4,6 սմ:
85. **Օրացոյց 1871 թուականին Քրիստոսի եւ Ազգիս Հայոց ՌՅԻ - 1320:** ԺԲ տարի: Խմբագրեց Գ.Տ.Ա. [հավանաբար Գէորգ Տէր-Աղեքսանդրեանց]: Թիֆլիս, տպ. Համբարձում Էնֆիաճեանցի: 1870, 120, 70 գծափակ էջ, շարվ. 8x5 սմ:

<u>Թերթեր</u>

86. **Մեղու Հայաստանի**[12]**:** Քաղաքական, բանասիրական, առևտրական թերթ: Թիֆլիս, 1862[13], (41x50 սմ), տպ. Ներսիսյան հոգևոր դպրոցի, 1862: Խմբագիր Ստեփանոս Մանդինեան:
87. **Վաճառական**: Թիֆլիսի առևտրական գազեթ: Շաբաթաթերթ: Թիֆլիս, տպ. Հ.Էնֆիաճեանց և ընկ.: 1866–1867, 4 էջ, 31x23 սմ.: Խմբագրող և հրատարակիչ՝ Տէր-Աղեքսանդրեանց:

---

*[11] Թեք տառատեսակով օրացույցների մասին տե՛ս **Խաչատրյան Հ.,** Հայկական օրացույցների և տարեցույցների մատենագիտություն, 1513-1973: Ե., 1976 թ., էջ 109:*
[12] Անկախ նրանից, որ թերթը Ներսիսյան հոգևոր դպրոցի տպարանից է փոխադրվել Համբարձում Էնֆիաճեանցի տպարան, մենք դիտարկում ենք առանձին գրամիավոր:
[13] 1862 թվականից սկսել է հրատարակվել տպարանատեր, հրատարակիչ Համբարձում Էնֆիաճեանցի տպարանում:

Ամսագրեր

88. **Կռունկ Հայոց աշխարհին**: Ամսագիր, բարոյական, բանասիրական, նկարագրական և վիճակագրական: Նվիրյալ նախկին և արդի Հայաստանյաց: Թիֆլիս, տպ. Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի: 1860-1963, 80 էջ, 23x16 սմ: Հրատարակիչ՝ Հ.Էնֆիաճեանց:

89. **Հայկական աշխարհի կռունկ**: Օրագիր ուսանողական և մանկավարժական: Թիֆլիս, տպ. Հ.Էնֆիաճեանց և ընկ.: 1864–1865, 34-40 էջ, 23x16 սմ: Խմբագիրող և տնօրինող՝ Ստ. Ստեփանէ:

90. **Հայկական աշխարհ**: Օրագիր կրոնական և մանկավարժական: Թիֆլիս, տպ. Մելիքյան և ընկ. ապա՝ Հ.Էնֆիաճեանց և ընկ.: 1865–1871, 48 էջ, 23x16 սմ: Խմբագիր-հրատարակիչ՝ Ստեփաննոս Ստեփանէ:

91. **Գարուն**: Ամսագիր ազգային լուսավորության և դաստիարակության: Թիֆլիս, տպ. Գլխավոր կառավարության փոխարքային Կովկասու, 1866 թվականից՝ Հ.Էնֆիաճեանց և ընկ.: 1866, 24x15 սմ: Խմբագիր-հրատարակիչ՝ Ստեփանոս Մանդինյանց:

ՄՈՎՍԵՍ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ՏՊԱՐԱՆԸ

Այս տպարանը հիմնադրվել է 1866 թվականին կամ դրա նախորդ տարում:

Գրքեր

92. **Մեծատունեան Եղիշէ:** Մասեայ որդւոյն Եղիշէի օրհնութեան քնարը (Մակար կաթուղիկոսի օծման կապակցութեամբ): Թիֆլիս, տպ. Մովսես Վարդանեանցի[14], 1866, 11 էջ, շարվ. 17x10,5 սմ:

ՏՊԱՐԱՆԸ ԿԱՄ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԹՎԱԿԱՆԸ ԿԱՍԿԱԾԵԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գիրք

93. Կանոնադրութիւն շինական հասարակութիւններու, նորանց հասարակական կառավարութէնի եւ թագավորական եւ հասարակական հարկատվութէնի համար: Թիֆլիս: 79 էջ:

---

[14] *Պահպանված գրքի օրինակը տիտղոսաթերթ չունի: Նկարագրությունը կատարվել է գրքի 1-ին և վերջին էջերից, որտեղ գրված է՝ «Տպագրեցավ 5-ն յունվարի 1866 ամի ի Տփխիս (типогтр. М.Варданяца)»:*

94. **Էնֆիաճեան Համբարձում**: Փոխումն յաստեաց պ. Գէորգեայ Ախվերդեան ի 17-ն նոյեմբեր 1861 ամի: Արտատպված է «Կռունկ Հայոց աշխարհի», 1861 թ., թիվ 11, էջ 870-886:

95. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԶԷՄՍՏՎԱՅԻՆ ՆԱՀԱՆԳԱԿԱՆ ԵՒ ԳԱՒԱՌԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ 1864 Թ. ՅՈՒՆՎԱՐԻ 1-ԻՆ[15]: 29 էջ, շարվ. 20x11 սմ:

96. **Բանչեւսկի:** Դոքտոր Բանչեւսկու դասերը: Թիֆլիս: 1865:

97. **Պալասանեան Ս.:** Քերականութիւն (փորձ) գավառական հայ լեզուի: Թիֆլիս: 1870:

98. **Ռոստոմեան Դավիթ:** Մուհամմէտը եւ իսլամի ծնունդը: 41 էջ, շարվ. 16x10 սմ:

99. *Գայլ Վահան Մամիկոնէի պատմութիւն (գաղիերենը տպագրվել է Փարիզում, ռուսերենը՝ Տփխիսում), մինչև 1867 թվականը[16]: Գինը՝ 30 կոպ.:*

100. *Եղիշէի պատմութիւն (իտալերենը տպագրվել է Վենետիկում, ռուսերենը՝Տփխիսում),մինչև 1867 թվականը: Գինը՝2 ռուբլի 50 կոպ.:*

101. *Կիպրիանոս, աղօթագիրք, Տփխիս, մինչև 1867 թվականը: Գինը՝ 50 կոպ.:*

102. *Սայեաթնովայ խաղեր, Տփխիս, մինչև 1867 թվականը: Գինը՝1 ռուբլի:*

103. *Վարք Քրիստոսի, Տփխիս, մինչև 1867 թվականը: Գինը՝50 կոպ.:*

104. *Եղերերգութիւն Կարենեանցի, Մահն Աբելին, Տփխիս, մինչև 1867 թվականը: Գինը՝1 ռուբլի:*

105. *Եօթն իմաստասիրաց պատմութիւն, Տփխիս: Գինը՝50 կոպ.:*

1838 թվականից մինչև 1870 թվականը Թիֆլիսում հայերեն գրքեր հրատարակել են հայկական 7 տպարաններ: Այդ տպարաններում հիշյալ թվականներին տպագրվել է **116 անուն գիրք, 14 օրացույց, հրատարակվել է 3 թերթ, 4 ամսագիր**:

Եզրակացություն

---

[15] Հայաստանի Ազգային գրադարանում, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ Մատենադարանում, Հայաստանի պատմության թանգարանում պահվող օրինակները տիտղոսաթերթ չունեն: Նկարագրությունը կատարվել է բնագրի առաջին էջից:

[16] 12 9-135 թվահամարների նյութերը վերցվել են Աւետիք Էնֆիաճեանցի գրատան գրացուցակից: Տե՛ս Յուցակ հայերէն մատենից: Տպագրելոց ի Վենետիկ, ի Վեննա, ի Կոստանդնուպօլիս, ի Կալկաթայ, ի Զմիւռնա, ի Ռուսաստան և յայլ քաղաքս, որք վաճառուին ի գրատան Աւետիայ Էնֆիաճեանց: Տփխիս, տպ. Հակոբ Էնֆիաճեանցի եւ ընկ., 1868, 42 էջ:

Ներսիսյան հոգևոր դպրոցի տպարանը հիմնադրումից՝ 1823 թվականից սկսած գործել է մինչև 1830 թվականը, ապա մինչև 1841 թվականը դադարել է գործել, որից հետո ընդհատումներով գործել է մինչև 1870 թվականը: Փաստորեն Թիֆլիսում 1830-1838 թվականներին, ավելի քան ութ տարի, դադարել է հայերեն գրքերի հրատարակությունը: Սակայն հայերեն գրատպությունն իրականացվել է հայկական նորաբաց այլ տպարաններում սկսած 1838 թվականից: Թիֆլիսում հայերեն գրքեր հրատարակել են Հակոբ և Դավիթ Արզանեանցների, Ղուլեանցի և Շահմուրադեանցի, Հակոբ Գրիգորեան Արզումանեանցի, Գաբրիել քահանա Պատկանեանցի, Մովսես Վարդանեանցի, Գաբրիել Մելքումեանցի և Համբարձում Էնֆիաճեանցի, ապա՝ միայն վերջինիս, տպարանները, Ալադաթեանցի գրատունը: Բացի Համբարձում Էնֆիաճեանցի տպարանից մյուսները երկար կյանք չեն ունեցել, աշխատել եմ ընդամենը մի քանի տարի, երբեմն ավելի քիչ, անգամ երկու տպարան հրատարակել են ընդամենը մեկական գիրք: Քննարկվող 32 տարվա ընթացքում՝ 1838-1870 թվականներին այդ յոթ տպարանները հրատարակել են 137 անուն տպագիր նյութ (116 գիրք, 14 օրացույց, 3 թերթ, 4 ամսագիր): Հոդվածի հեղինակը մանրակրկիտ մատենագիտական աշխատանք է կատարել Ներսիսյան հոգևոր դպրոցի տպարանից անկախ գործած հայկական այլ տպարանների գործունեության ժամանակը ճշտելու, դրանցում տպագրված գրքերի, օրացույցների, թերթերի տպագրության տվյակները ճշտելու, դրանց ստույգ մատենագիտությունը կազմելու ուղղությամբ:

Тируи Сиреканян

Армянские типографии Тифлиса (1838-1870 гг.)

Резюме

Типография духовной семинарии Нерсисян действовала с момента своего основания в 1823 г. до 1830 г., затем до 1841 г. прекратила работать, после чего работала с перерывами до 1870 г. Фактически в Тифлисе в 1830-1838 гг. издание армянских книг было прекращено на восемь лет. Однако печатание армянских книг осуществлялось с 1838 г. в других вновь открывшихся армянских типографиях. В Тифлисе книги на армянском языке издавали типографии Акопа и Давида Арзанянца, Гулянца и Шахмурадянца, Акопа Григоряна- Арзуманянца, иерея Габриэла Патканянца, Мовсеса Варданянца, Габриэля Мелкумянца и Амбарцума Энфиаджянца, позднее – лишь типографии последнего и типография Аладатянца.

Все типографии, кроме типографии Амбарцума Энфиаджянца, проработали недолго, всего несколько лет, иногда даже меньше; две из них

издали всего по одной книге. В рассматриваемый нами период в 32 года (1838 - 1870) во всех этих семи типографиях было издано 137 наименований печатных материалов (116 книг, 14 календарей, 3 газеты, 4 журнала).

Автор статьи провела детальное библиографическое исследование с целью выяснения времени деятельности других армянских типографий, действующих независимо от типографии духовной семинарии Нерсисян, уточнения данных, касающихся издаваемых в них книг, календарей и газет, составления их точной библиографии.

Tiruhi Sirekanyan

Armenian Printing Houses in Tiflis (1838-1870)

Summary

The printing house of the Nersisyan Theological Seminary has operated from the moment of its foundation in 1823 until 1830, then stopped working until 1841, after which it has worked with breaks until 1870. In fact, the publication of Armenian books has been stopped for eight years in Tiflis in 1830-1838. However, the printing of Armenian books has been carried out by other newly opened Armenian printing houses since 1838. In Tiflis, the books in Armenian have been published by the printing houses of Hakob and David Arzanyants, Gulyants and Shahmuradyants, Hakob Grigoryan-Arzumanyants, Priest Gabriel Patkanyants, Movses Vardanyants, Gabriel Melkumyants and Hambartsum Enfiachyants, later only the printing house of the latter and the printing house of Aladatyants.

All the printing houses, except the printing house of Hambartsum Enfiachyants, have not worked for long, only for a few years, sometimes even less; two of them have published only by one book each. 137 names of printed materials (116 books, 14 calendars, 3 newspapers and 4 magazines) have been published by all these seven printing houses during the period of 32 years considered by us (1838 - 1870).

The author of the article carried out a detailed bibliographic study with the purpose of the clarification of the period of the activities of other Armenian printing houses operating independently of the printing house of the Nersisyan Theological Seminary, the clarification of the data regarding the books, calendars and newspapers published in them, as well as the compiling of their exact bibliography.

Խմբագրություն է ուղարկվել 25. 05. 2021թ.
Հանձնարարվել է գրախոսության 10. 06. 2021թ.
Տպագրության է հանձնարարվել 16. 09. 2022թ